

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

"Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ" պետական ոչ առևտրային կազմակերպության Կրթության որակի ապահովման կենտրոնի

"Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ" պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) Կրթության որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է կրթության ապահովման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կազմակերպչական և մեթոդական հիմքը և նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Ինստիտուտի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը մշակված է համաձայն ՀՀ գործող օրենսդրության, կրթության ոլորտում նորմատիվ կարգավորող փաստաթղթերի և Ինստիտուտ կանոնադրության:

1.2. Կենտրոնը հանդիսանում է Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում և իրականացնում է իր գործառույթները ամենամյա աշխատանքային և հեռանկարային պլանով: Կենտրոնի աշխատանքներն իրականացվում են Ինստիտուտի ռեկտորի հետ սերտ համագործակցությամբ և ուսումնագիտական աշխատանքների գծով ււրոռեկտորների անմիջական ղեկավարությամբ:

1.3. Կենտրոնի աշխատանքի ղեկավարումը կատարում է կենտրոնի ղեկավարը, որը նշանակվում և ազատվում է աշխատանքից ռեկտորի հրամանով ըստ գործող աշխատանքային օրենսդրության:

1.4. Կենտրոնն իր աշխատանքներում առաջնորդվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ կառավարության որոշումներով, կրթության ոլորտը կարգավորող նորմատիվային փաստաթղթերով, կրթության ոլորտում որակի ապահովման պետական

և միջազգային չափորոշիչներով, որակի ապահովման համակարգում փաստաթղթերի ձևակերպման երաշխավորագրերով, Ինստիտուտի կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով և կարգադրություններով:

1.5. Կենտրոնը համագործակցում է Ինստիտուտի ստորաբաժանումների հետ:

2. Կենտրոնի հիմնական խնդիրներն ու գործառույթները

Կենտրոնի հիմնական խնդիրները և գործառույթներն են.

2.1. Մշակել կրթության որակի ապահովման համակարգի ներդրման և կատարելագործման միջոցառումների պլան:

2.2. Նախագծել միջազգային որակի ապահովման չափորոշիչներին համապատասխանող իրավական նորմատիվ փաստաթղթերի համակարգ:

2.3. Սահմանել կրթության որակի ապահովման համակարգի ցուցանիշները և նրանց մոնիթորինգը կարգը:

2.4. Պատրաստել նյութեր ներքին աուդիտի արդյունքների հիման վրա, կազմակերպել և վերահսկել Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներում որակի ապահովման համակարգի ներդրումը:

2.5. Ինստիտուտի կրթության ոլորտում որակի ապահովման քաղաքականություն իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ աշխատանքային գործընթացների համակարգման, դրանց որակի չափանիշերի և բնութագրերի որոշման, չափման մեթոդների և տեղեկատվության հավաքագրման հարցերում:

2.6. Ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսականկազմի աշխատանքները համաձայնեցել կրթության որակի մոնիթորինգի և որակի ապահովման համակարգի կատարելագործմանն ուղղված վարչական որոշումներին:

2.7. Ձևավորել ինստիտուտի կրթության որակի ապահովման համակարգի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մշակման, կրթության որակի հարցերով վերլուծական տեղեկատվական տվյալների բանկ:

2.8. Զարգացնել համագործակցություն այլ բուհերի որակի ապահովման կենտրոնների հետ, որը ենթադրում է փորձի փոխանակում, որակի ապահովման խնդիրների վերաբերյալ ուսումնա-մեթոդական և գործնական գիտաժողովներին

մասնակցություն:

2.9. Համակարգել ինստիտուտի լիցենզավորման, հավաստագրման և հավատարմագրման հարցերի վերաբերյալ աշխատանքները, լիցենզիայի և հավատարմագրման վկայական ստանալու համար պատրաստել անհրաժեշտ մեթոդական և տեխնիկական նյութեր:

2.10. Մշակել ինստիտուտի կրթության որակի ապահովման համակարգի հեռանկարային պլանը:

2.11. Մշակել որակի ապահովման համակարգի սխեմա:

2.12. Ինստիտուտի ղեկավարությանը ներկայացնել տեղեկատվություն որակի ապահովման համակարգի ներդրման արդյունքների և կրթության որակի կատարելագործման առաջարկների վերաբերյալ:

2.13. Կենտրոնի գործունեության վերաբերյալ ամենամյա հաշվետվություն ներկայացնել Ինստիտուտի գիտական խորհրդին:

3 Կենտրոնի կառուցվածքը և կազմը

3.1 Կենտրոնը բաղկացած է հետևյալ աշխատախմբերից

- աուդիտի որակի ապահովման
- մոնիթորինգի և վերլուծության
- գործավարության կառավարման
- նախագծման և փորձագիտական գործունեության ծավալում

լիցենզավորման, հավատարմագրման և հավաստագրման բնագավառում:

Կենտրոնի կառուցվածքը և հաստիքացուցակը, ինչպես նաև դրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են Ինստիտուտի ռեկտորի հրամանով:

3.2. Կենտրոնի կազմը ձևավորվում է Ինստիտուտի ռեկտորի կողմից, կենտրոնի ղեկավարի ներկայացմամբ՝ համաձայն ՀՀ գործող աշխատանքային օրենսդրության:

3.3. Կենտրոնի ղեկավարը համակարգում և ուղղորդում է աշխատախմբերի աշխատանքը, նրա հրահանգները պարտադիր են Կենտրոնի աշխատակիցների համար:

3.4. Կենտրոնի աշխատակիցները իրենց գործառույթները կատարում են

աշխատանքային պայմանագրի համաձայն:

3.5. Կենտրոնի աշխատակիցներն ընդունվում են աշխատանքի ըստ համապատասխան պաշտոնի նկարագրի:

4 Կենտրոնի աշխատանքի ուղղությունները

Կենտրոնն աշխատանքներ է տանում հետևյալ ուղղություններով.

4.1. Կազմակերպչական գործունեություն՝ կրթության որակի ապահովման, աուդիտի և մոնիթորինգի գործընթացների մշակման կազմակերպում և ներդրում:

4.2. Կառավարչական գործունեություն՝ ինստիտուտում կրթության որակի ապահովման ուղղությամբ համապատասխան որոշումների նախագծերի և մեթոդական ցուցումների մշակում:

4.3. Վերլուծական գործունեություն՝ ինստիտուտում որակի ապահովման համակարգի արդյունավետության և այլ բուհերում ներդրված կրթության որակի ապահովման լավագույն մոդելների վերլուծություն:

4.4. Մեթոդական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում պրոֆեսորադասախոսական կազմի և ներքին աուդիտորների վերապատրաստում:

4.5. Համակարգող գործունեություն՝ կրթական որակի ապահովման գործընթացի մասնակիցների աշխատանքային խմբի ձևավորում:

4.6. Խորհրդատվական գործունեություն՝ կառուցվածքային ստորաբաժանումներին խորհրդատվություն որակի ապահովման վերաբերյալ:

4.7. Նորարարական գործունեություն՝ միջազգային որակի չափորիշիչների պահանջներին համապատասխանող կրթության որակի ապահովման համակարգի ժամանակակից նմուշորինակի ներդրում:

4.8. Շուկայագիտական գործունեություն՝ Ինստիտուտի շրջանավարտների պատրաստվածության որակի վերաբերյալ սպառողի պահանջների ուսումնասիման:

4.9. Տեղեկատվական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում Կենտրոնի գործունեության արդյունքների և Ինստիտուտի ձեռքբերումների վերաբերյալ հասարակայնությանը, Ինստիտուտի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին տեղեկատվության տրամադրում:

4.10. Միջբուհական համագործակցություն՝ որակի ապահովման բնագավառում այլ

բուհերի հետ փորձի փոխանակում:

5 Կենտրոնի փոխհարաբերություններն Ինստիտուտի ստորաբաժանումների և աշխատակիցների հետ

Կենտրոնի փոխհարաբերություններն այլ ստորաբաժանումների և աշխատակիցների հետ իրենցից ներկայացնում են.

5.1. Ինստիտուտի ղեկավարների հետ արդյունավետ համագործակցություն կրթության որակի ապահովման հարցերով:

5.2. Ինստիտուտի հաշվապահության հետ՝ կրթության որակի հիմնախնդիրների վերաբերյալ մատուցած կրթական և տեղեկատվական ծառայությունների վարձատրման հարցերով:

5.3. Ինստիտուտի իրավաբանի հետ՝ Կենտրոնի գործունեությանն առնչվող համապատասխան փաստաթղթերի մշակման հարցերով:

5.4. Գրադարանի հետ՝ կրթության որակի մոնիթորինգի և կառավարման վերաբերյալ գրականության ֆոնդի ստեղծման հարցերով:

5.5. Ուսումնական վարչության հետ՝ համագործակցություն կրթության որակի ապահովման համակարգի ներդրման հարցերով: